աղաչեալ կնոջն զեպիսկոպոսունս իւր ձեռնադրել զՆերսէս Բակուր ի կաթուղիկոսութիւն Աղուանից։ Իբրեւ անցին ժամանակք ինչ, երեւեցոյց զաղանդն՝ զոր յղացեալ ունէր, իբրեւ յանդիմանեցաւ յեպիսկոպոսացն և յերիցանցն, հալածական արար զբազումս. և ժողովեալ առաջնորդացն Աղուանից՝ նզովեցին զնա, և գրեցին առ կաթուղիկոսն Հայոց Եղիա օգնել նոցա։ Եւ գրեաց Եղիայ առ գլխաւորն Տաճկաց Ալպտրմելիք, թէ Առաջնորդն Աղուանից, և կին մի կամին ապստամբեցուցանել ի քէն զաշխարհն, զի Յունաք թեւակոխեն։ Եւ հրամայէ Եղիայի գնալ յաշխարհն Աղուանից. —ընկենուլ զնա յաթոռոյն. զնա և զկինն ի միասին կապել նոցա և արկանել զուղտով որպէս զբեռն, և տանել ի դուռըն արքունի, զի նշաւակ լիցի ամենայն զօրուն։ Եւ գնացեալ Եղիայի և ներքինւոյն արքայի ի քաղաքն Պարտաւ՝ արարին զհրամանն արքայի և մինչ այսպէս անարգանօք ձաղէին զնա, ի նեղսրտութեան անկեալ Ներսէսն՝ յետ ութ աւուր վախճանեցաւ դառնապէս։ Եւ մուրհակ ետուն ամենայն նախարարքն Աղուանից և ամենայն եպիսկոպոսունքն առաջի ներքինւոյն՝ հրամանաւ և մատանեաւ արքունի, զի առանց հրամանի Կաթուղիկոսին Հայոց ոչ ձեռնադրեսցեն կաթուղիկոս Աղուանից։ Եւ ձեռնադրէ Եղիա յաթոռն Աղուանից զտէր Սիմէօն, որ զպղտորումն Ներսէսի եբարձ, կացեալ ամ մի և կէս, և եդ կանոնս եօթն տուն։ Տէր Միքայէլ ամս երեսուն և հինգ. սա կոչեաց զՄաքենացւոց հայրն Սողոմոն, և անէծ զտեարս Աղուանից, որ զերից ազգաց զծընունդսն ամուսնացուցեալ էին, որք բարձան ի միջոյ առ հասարակ. նզովեցին և զԹալիլէ Վրաց Առաջնորդն, զի նա հրաման տայր անօրէն ամուսնութեանն։ Տէր Անանիա ամս չորս։ Տէր Յովսէփ ամս տասն և եօթն։ Ի սորա հինգերորդ ամին լցաւ երկերիւր ամ թուոյ Հայոց։ Տէր Դաւիթ ամս չորս, սա թափեաց զհողդ և զսպասս սրբութեանն, և դեղակուր եղեալ մեռաւ։ Տէր Դաւիթ ամս ինն. սա վաճառեաց անօրինաց զԴաստակերտն և զՍահմանախաչ։ Տէր Մատթէոս ամ մի և կէս, և սա եւս դեղ մահու արբեալ վախճանեցաւ։ Տէր Մովսէս ամ մի և կէս։ Տէր Ա.հարօն ամս երկուս։ Տէր Սողոմոն, Տէր Թէոդորոս չորս։ Տէր Սողոմոն ամս մետասան և կէս։ Տէր Յովհաննէս ամս քսան և հինգ.